

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՅՐ"Ի

ԴՐԱՄ ԿԱՄ ԲՊԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՂՅԱՆ ԱՌ  
ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՅՐ" ԼՊԱԳՐԻ  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Չեռագիրներն եւ չեն գործարար,  
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄՈՒՆԻԵ

# ՆՈՐ ՅՐ

ՇԱԲԱԹ ԱՌԵՐԹ  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ ԴՐՇ. ՈՂՋ  
Կահիրէի համար վեցամսեայ 20  
» » հրամանայ 12  
Շրջակայից » վեցամսեայ 25

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՉԱՄԱՐ  
վեցամսեայ . . . . . Յրանց 7

ՌՈՒՍԻՈՑ ԵՒ ԿՈՂԿԱՍԻ ՉԱՄԱՐ  
վեցամսեայ . . . . . ռուբլի 3

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՄԸ ԿԱՆԻՅԿ Է  
ԵՒ ԹՂԹՍԱՐԻ ՄԱՍԻՐԸ  
Խմբագրութեան վրայ է

## ՀԱՅՈՒՆ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳՍՆ

(ԱՐՄԱՆ ԶԱՐԵՆԱՆ)

Ահա առիթն է հայրենասէրն ու բարձրակարգ մտայնացողը հայրենասիրտը շահեկան բանաստեղծութիւնները որ արտասանուեցան՝ անցեալ կիրակի՝ Լուսաւն-Բնակեցատան մէջ։ Սիրելի է մեզ յուսալ թէ, զանազան հրատարակութեան տարով հաճոյք մը պատճառած պիտի ըլլանք մեր ընթերցողներուն։

### Սիրելի Հայրենակիցներ։

Անդրանիկ Լուսաւնիս առթիւ Ձեզ հետ թիչ մը խօսելու կը պատրաստուուէի, երբ բարեգիպօրէն կարգացել «Անահիտ»-ի վերջին թիւը, զոր ինչպէս կարգացիք անշուշտ, իր շատ մը շահեկան առաջնորդողը կուգար այսօրուան մեր համախմբումին շարժառիթ եղող կենսական ամենէն անհրաժեշտ մէկ պահանջին այժմէութիւնը շեշտել, ու թելադրել ինձ միանդամայն այդ մասին բանի մը վարկեաններ ձեր թանկագին ուշադրութիւնը դարձնելու բանի մը խօսքերուս, որոնք, թէ և ձեր գիտցածէն ու մտածածէն աւելի բան մը արտայայտելու բնութիւնը չունենան, բայց գոնէ նոյն զգացման ու մտածման պատիկ մէկ արձագանքն ըլլալու հաճոյքը պիտի ունենամ, ինչ որ կը յուսամ թէ չէք վախար ինձ։

Աւելորդ է բան թէ՛ մեզ համար բաւական տարբերակ նորութիւն մըն է, Սկովտացի մ. լիւրատէրի մը հանրագրու նպատակի մը համար ցոյց տըռած այս թիչ մը բնահաճ տրամադրութիւնը՝ զոր թելադրարար հանրային կարծեաց ենթարկած է. և որ, միևնույն մը կարգին, հազարաւորներու թուոյն մէջ՝ կուգար ընտրել աւանդէն փոքրագոյն թիւը, որ հանրային ընթերցատուններ հիմնելու զաւաճարը կառավարկեր։

Սրբ, ինչպէս կ'ըսէի, մեծահարուստ կտակարարի կանխորոշ արամադրութիւնն է եղած, ուր ամենէն խորունկ գիտակցութիւնը կարտայայտուի, ժողովուրդի մը զարգացման ու յառաջդիմութեան համար՝ միջոցներու ամենէն լաւագոյնն ու գրականին ընտրողութեամբը, արդիւնք՝ մարդկային հիմնական բարօրութեան հոյակապ ու վսեմ մտածումի մը, զոր սենեցած է այդ մեծ Սկովտացին, և որ ամենէն

պերճախօս փաստը կուտայ, ամենէն շօշափելի ու գրական երևոյթը կը պարզէ մեզի՝ պէտք եղածէն աւելի բացատրութիւնը ապով հանրային ընթերցատուններու անվիճելի կարելուցութեան և անոր բարձրագոյնի սղուաններուն վրայ, զորս մենք ալ մեր կարգին, սկսած ենք ճանչնալ հետզհետէ. ու ահա՛ այսօրուան մեր համախմբումը, այս նուիրական յարկին տակ, նոյն կարեւորութեան ու օգուտներուն գիտակից մէկ արտայայտութիւնը կրնանք համարել ու հաւատարկ շատ բնականօրէն՝ Անգլիայի պէս հըզօր ազգէ մը աւելի պէտք զգալով հանրօգուտ միջոցներու ու հաստատութեանց մեր մէջ գոյացուելուն ու ընդարձակուելուն. և քանի որ մենք հետեւող մը եղած ենք ու պիտի ըլլանք Արեւմտեան ազգերու քաղաքակրթութեան, չենք կրնար ուշադրութեան չտանել այս տեսակ հոկայ երևոյթներ որոնք մեզի կը ներշնչեն ամենէն շօշափելի ու կորովի դադափարը՝ մեր ընդհանուր զարգացման ու յառաջդիմութեան գործին համար, արդարացի ենք ու համար բոլոր այն յատկութիւններն ու ձիրքերը, որոնցմով ալ Եւրոպան մեզ կը զիտէ ու կը մասնանշէ այսօր, մինչդեռ մտաւոր անցեալի մը մէջ Հայ անունն անգամ անձանօթ էր իրեն։

Մեր կեանքին մէջ յեղաշրջում մը յառաջ եկաւ սա վերջին տարիներս, որոնք թէ և այնքան աղետաբեր եղան, բայց այդ արիւնի կարմիր ու սև օրերուն կը պարտի Հայը՝ իր գոյութեան բացարձակ իրաւունքը, որուն այնքան զօրեղ ապացոյցները տուաւ իր արիւնի թանկ գնով։

Ինչո՞ւ այսքան զոհարելութիւն մեկէն՝ դարաւոր թմրութենէ մը յետոյ, երբ յանկարծ մեզ ճնշող ու ճշել տըռող ստրկութեան անարգ լուծը կը թաթռէինք, մեզ կաշկանդող զերութեան ժանգ շղթան կը խորտակէինք 20րդ դարու սեմին վրայ կանգնած, սերկէ ներս կը մտնէինք ահա՛ Ե-Յ դարերու ստրկի ու ամուլ կեանքի մը արատն ու ամթթը սրբելով մեր ճակատէն, մինչ անոր ետին շարք մը սակի գարեբու բեղմնավոր անցեալ մը կը թողու Հայը՝ ուր անկախ ու ինքնուրոյն կեանքը սպրեցաւ ան։

Ու ահա մերթ հզարա, մերթ ըստ ըստ տարբերէն յետոյ, այսօր այդ ազգային բզկտուած ճակատագրին ապագան երաշխատուելու վսեմ հոգը ճակատագրապէս կուգայ ծանրանալ մեր հարազատ սրտերուն ու մտքերուն վրայ, երբ մեր աչքերովը զիտեցինք ազգային ամբողջ կեանքի մը քայքայուելը, ուր ամենէն ախարը՝ Հայ աշխարհին պարպուելն ու ամոյանալը եղաւ իր հալածեալ զաւակներուն կորստաբեր տարագրութեամբը աշխարհի ամեն կողմը, թողով այն տեղ հազարաւոր անմեղ նահատակներու սուրբ արիւնը, որ դեռ կը մըլխայ այդ նուիրական աւերակաց մէջ։ Պէ՛տք է նուիրագործել անոնց յիշատակը որ մեզ կը ցնցէ, կը բռնադատէ պարզապէս արիւն-գետով զրուած փորձառութեան մը բոլոր նախազգուշութիւնն ու հեռատեսութիւնը ունենալ. համընթաց դնալով ընչաքաղց ժամանակի անողոր պահանջներու հետ և գիտակցութիւնը ունենալով ամէն բանէ առաջ մեր դժբաղ վիճակին։

Հայուն կեանքը հոգեվարք մըն է այսօր, ու դէպքերու խաղալիք. լուսատես չըլլանք այնքան, ու ճիզերը զոր պէտք է թափենք՝ մեզ հազիւ վերահաս սերնդին անէծքէն խուսափեցնէ թերևս։

Այո՛, ալ լաւատեսութիւնը սխուր հեղուկութիւն մըն է. պէտք է հեռատես ըլլալ, ու կշռել մեր վիճակին ծանրութիւնը, մեր վերջին խորութիւնը որ սրտերնիս ծակիկեց ու դեռ կը կոթայ։

Ալ ժամանակն է որ մենք մեր ուժերը մեր մէջ ամփոփենք ու իրարու մէջ ամփոփուինք, ալ թողունք օտարը, թողունք անոր յոյսերովը օրօրուելու նուաստացուցիչ ստորաժամ ու խարխալուի միջոցը, երբ նա՛՛ դեղարուեստական ճաճակով մը զիտեց մեր արիւն-արցունքի սև օրերը, ուր Հայուն դարաւոր խիզղուած հոգին կը ճշէր զինքը բզկտող վիթխարի ցաւին տակ։

Հայուն աշխարհը ամբողջ, լացի, կոծի, սուգի ու ողբի թատրը դարձաւ, օտարը՝ հեռուէն հանդիսատես մը եղաւ միայն։ Եւ միթէ կարելի է մտնալ այս ամէնը, ու դեռ յոյս գնել

օտարին վրայ, որ երբեմն հոգին տակ փոշիացած զինուորի մը մէկ աճիւնին հետ անգամ՝ բազդատուելու անարժանի հրէշային յայտարարութիւնը լսեցինք ի լուր աշխարհի, հիմայ ինքալ փոշիացած ճիւղէ մը, որ իր ժամանակին ամենէն մեծ մարդը եղաւ... անէծք յիշատակին։

Ինչո՞ւ դեռ հեռուն, մենք այսօր աչքի տուչն ունինք խեղճ թորանարկաւը՝ որ հոգեվարքի մը օրհասական օրերուն մէջ, արդարութեան, մարդասիրութեան անունով օգնութիւն, պաշտպանութիւն կաղերսէ. բայց անտարբեր Եւրոպան՝ միջամտելէ ալ կը հրամարի, պաղատանական զրուելու և ապշեցուցիչ ցաւ մը արտայայտելով միայն, մինչդեռ Անգլիան նորանոր պատրաստութիւններ կը տեսնէ միանգամ և եթ ջրամելու արիւնը, աղիւ՛ւ արիւնը, ժողովուրդի մը, որ ամենէն մեծ հոգին կրցն մարդկութեան ու ամենէն մեծ սիրողը եղաւ ազատութեան. և ասոնց պէս դեռ շատ մը օրինակներ, որոնք մեզ կը հեռացնեն օտարէն։

Աւելորդ չեն միթէ օրինակները, երբ մենք մեր աւերումի՛ քայքայուած կեանքին մէջ գործնական փորձափոթութիւնը ունեցանք, ու հիմայ թողունք որ տակաւին մեզ խարն, թողունք որ մեր ցաւերը, մեր զոհերը, մեր յոյսերը շահագործեն իրենց անձնական եմքերիներուն համար. թողունք, որ մարդասիրութեան գիմակին տակ, զան խլեն, յափշտակեն մեր գրկէն մեր հարազատ օրերը, մեր ապագայ յոյսերը, կրօնքի զրծուծ ու սիրտ խառնող շահադիտումով սողորուած յանձնառուներ, որոնք, պղտոր ջրին մէջ ձուկ որսացող ձրկնորսի մը պէս՝ զզուելի խրոտումով մը՝ Հայ արիւնին մէջ եկան փնտռել իրենց որսը։

Անցեալը քան աւելի անստոյգ վիճակ մ'ունինք, լաւ ըմբռնենք։ Մեր թշնամին մէկէ աւելի է, որ անդալի արողութեամբ զփոխային ծրագիրներ կիրագործէ, ու խրամատներ կը բանայ մեր ոտքերուն տակ, և թերևս յանկարծակի մը բերէն մեզ օր մը, եթէ դեռ շարունակէ մեր այս ազգովին անտարբեր վիճակը, իր ախար պատճառներով, որոնց մասին խօսելն անգամ աւելորդ պիտի ըլլայ . . .

Թուրքը՝ սկսածին պէս վերջացը- նել կը ձգտի, իր հայաջինջ քաղա- քականութիւնը, չի հասնի՝ այդ օր- ուան։ Ռուսը՝ որ ամենէն զարհուրե- լին է՝ իր պատմական նենդութեամբը ու աւանդական ծրագրովը, միւս կողմէ մեր այս անկերպարան ու տարտամ վիճակէն օգտուելով, ստակալի հար- ուածներ կուտայ հայութեան սրտին ու հոգուն։

Գպրոցները փակեց, կրթական և բարեգործական հաստատութիւնները արգիլեց։ Ահա՛ վերջին ցնցող դոյժն էր որ կը հասնէր վերջերս կողկապէն՝ Հայոց հրատարակչական ընկերու- թիւնն ալ գոյութենէ կը դատրեր, ու ատոր պիտի յաջորդէ անմիջապէս բանի մը ծխական վարժարաններու փակումն ալ, հակառակ՝ կայսերա- կան ուրախութեամբ ու պայծառութեամբ անձեռնմխելի առանձնաշնորհումներուն։ Եւ յաջորդաբար եկեղեցին, ու դեռ ինչ որ կայ՝ Հայուն ինքնորու- յութիւնը պահող ու պաշտպանող։

Ահա՛, այս աղետալի ու քստմնելի իրողութեանց առջև մենք ոչինչ ուն- ինք ընելու, բայց եթէ տէր ըլլալով մեր ազգայնութեան, մեր արհամար- ուած ու հալածուած լեզուին, մեր տոհմային պատմութեան ու զրակա- նութեան, մեր զարգացման ու կըր- թութեան. աէր ըլլալով բոլոր աւան- դութեանց ու հնութեանց, որոնց պար- բերական ջնջումովը զինուած է մեզ զէմ մեր թշնամին. լաւագոյն դասը տալով մեզի մեր ընելիքին. և ուղիղ չէ՛ ընդունիլ, կամպէթայի սա խօսքը թէ՛ «մեր թշնամին մեր օգնականն է»։

Եզրպատուի տարազրութիւնը, որ իր ստուար թուովը հաւաքական մէծ ուժը կը կազմէ, ու միջավայրը որ այնքան նպաստաւոր է, ու մեզ տուած է ամէն ազատութիւն, ազատ խորհե- լու, ազատ խօսելու և ազատ գործե- լու, զիմանք օգտուիլ առիթէն մի- ջավայրէն ու ժամանակէն՝ որ ամենէն մեծ կորուստը կանաչադրէ։

Ուրախալի է անշուշտ տեսնել, բո- լոր այս ախար իրողութեանց շարքին, Երրօրական բանի մը կեդրոններու մէջ Հայը իր պատմութիւնով, իր զը- բականութիւնով, իր անցեալովն ու ներկայովը Երրօրային ճանչցնելու եռանդուն ճիւղերը, զորս չենք կրնար չի գնահատել, և՛ ըստ իս՝ ամենէն մեծ ու իրական ծառայութիւնն է ժամանա- կին, ամենէն լաւագոյն և նպատակա- յարմար յեղափոխութիւնը թերևս, նոյնիսկ օտարներէն բան մը սպասե- լու քաղաքական տեսակէտով, զոր ըրին ու պիտի ընեն անոնք՝ որ ձեռն- հաս են ու զիտակից առաջադրելիք արդիւնքին։ Վասնզի մեր նիւթական ուժերը, զէնքի ու սուրի յեղափոխու- թեան, որ թէև անխուսափելի՝ բաւա- րար չեն առայժմ, եթէ անպատճառ յեղափոխութիւնը այս անցուկ սահ- մանին մէջ ճանչնալու ստիպուած ենք . . . անտեսական այս ստակալի պայմաններուն մէջ՝ ուր հազիւ Հայ մարդը իր չոր կեանքը կարող է մաս- ծել, այսու հանդերձ ըսել չենք ու- զեր բնաւ թէ՛ յեղափոխութիւնը վը-

նասակոր է, ո՛չ, ընդհակառակը, ինչ- պէս վերև հաստատեցի, անոր կը պտրտինք մեր այսօրուան վիճակը, զիտակից վիճակը։ Եւ պէտք է մի- անգամ և եթէ համոզուինք թէ՛ յե- ղափոխութիւնը միայն, իր ճշմարիտ իմաստովը ու գործածութեամբ, պիտի գայ փրկել մեզ, իսկ յեղափոխու- թիւն վասնյեղափոխութեան՝ այս ար- դէն մենք աչքի առջև ունինք դժբաղ- դաբար, ու դառնապէս կը կրննք անոր ախար հետեւանքները։

Ահա այսպէս, երբ մէկ կողմէն թշնամին, աջէն ու ձախէն հարուած- ներ կուտայ ու մեզ խեղդել կուզէ՝ մենք ալ՝ փա՛ռք Աստուծոյ, ոչ նուազ կը նպատակնք մեր անձնական զոռն ու կուսակցական զոռնելի հաշիւնե- լով ու կուրծքով, որ իր գոյութեան միակ ապացոյցն է, ետ ձգել ու թեր- եւս վտանգել սղզին սրբազան Դա- տը՝ քանի որ դեռ չի կրցանք ըմբռ- նել ու ըմբռնել տալ, սա մեր անձ- կութեան ախար օրերուն մէջ, ժա- մանակին ամենէն անողոր պահանջը եղող համերաշխութեան ու միութեան անխուսափելիութիւն մը, ժողովուր- զին՝ բնականօրէն՝ խախտած հաւատ- քն ու վստահութիւնը վերաշահելու համար, երբ՝ չենք կրնար չի խոտո- վանիլ առանց խղճահարելու թէ ա- մենէն աւելի զոհուողը եղաւ ան, ու միշտ պիտի ըլլայ՝ եթէ շարունակէ այս յամառ ու աղքատիւ ընթացք որ ամենէն զէջ վնասը բերաւ գործին։

( Շարունակելի )

ՊԶՏԻԿ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Կերբի թէ «Արարոյականութեան սահ- մաններ» վերնագրով վերջին յօդուածը, հակառակ Հայերէն գրուած ըլլալուն, շա- տերու կողմէ անհասկնալի մնացած է և տը- ուած են անոր մեկնութիւններ որոնք՝ մի- միայն մաշած տիրացուներու զետեւ մէջ կրնան բռնել։

Ասոնք կարծեք են թէ ես պաշտպանել և կամ չբանդացնել սղզի եմ ինչպէս առա- կայ եղող հոգաբարձուն։

Որքան հետո ենք . . .

Յօդուածի նպատակը անբարոյական բարին՝ մեր մէջ սխալ հասկացում ըլլալն էր և ոչ ուրիշ բան, ինչպէս ուրիշ առթիւ ալ այդ միևնոյն թէզը պաշտպանած եմ ուրիշ յօդուածներով։

Լուծիս համեմատ, շատ մը կիկոներ ալ կը պնդեն եղեր թէ՛ այդ հոգաբարձուն՝ զրամ տալով ինծի՝ այդ յօդուածս զրի տը- ուած է։ Աւելին կայ, նոյն իսկ ըսողներ գտնուեք են թէ, այդ Պ. հոգաբարձուն կը պարծնայ եղեր թէ, իրաւի զիս զրամով կաշառած է . . .

Արդ, ամէնքն ալ իր տեղը գնելու հա- մար, կը բա՛ւէ արդեօք, եթէ հրապարակաւ յայտարարեմ թէ, ե՛ս չեմ ճանչնար տա- կաւին հոգաբարձու մը՝ ինչպէս նիւթ եղողը և կամ ուրիշներ, նոյն իսկ թագական մը, որ կարող ըլլայ կաշառել Ալփիարի մը զը- իշը սրուն միակ արժանիք՝ անկեղծ, անկողմ- նակալ և ազատ ըլլալն է։

Այսքան։

ՏԻԿԻՆ ՆՈՅՄԻ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ "Ը- գառտուր մահուան լուրը Աղբքսան- գրիայէն հոս կայծակի արագութեամբ հասաւ և բոլոր հայութեան սիրտերն ի խոր յուզեց։

Տիկին Նոյեմի դեռ հազիւ 20 գա- ռուններ բոլորած, կարծես ձանձրա- ցած այս արատաւայ հովտէն, կը մեկ- նի ի խոր սուղ թողով իւր ծնողքն ան- մըխիթար, իւր ամուսինն վշտահար և իւր ազգականներն սրտաբեկ։

Տիկին Նոյեմի դուստրն էր վլսեմ. կարապետ պէյ Շէրիտճեանի՝ զիւս- նապետ արտաքին գործոց նախարա- րութեան և անդամ ֆաղաք. Ժողովոյ Ազգ. Գաւառական վարչութեան, և զրեթէ 5 ամիս առաջ ամուսնացած էր Տիար Տօթթէօր Ժամկոչեանի հետ որ յԱղբքսանգրիա ընդարձակ շրջա- նակի մը մէջ այնքան համակրանք և համբաւ կը վայելէ իւր հմուտ- թեամբ և ազնիւ ձիրքերով և այնքան օգտակար հանդիսացած է իբր նախա- զահ Տօթթէն խորհրդոյ Աղբքատանմա՝ ընկերութեան։

Յուզարկաւորութեան տխուր հան- դէսը տեղի ունեցած է անցեալ կիւ- բակէ, վերջացող ամսոյն 28ին ծնո- ղաց, ազգականաց և բարեկամաց հոծ բազմութենէ մը շրջապատեալ։ Թա- փօրին նախագահած է Գ. Ի. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան Առաջնորդ Հայոց Եզրպատուի, որ այս պահուս յԱղբքսանգրիա կը գտնուի, իսկ զազաղին ծոպերը բռնած էին վլսեմ. Արթին պէյ Բէյիզեան, Միքայէլ պէյ Բէյիզեան, Արթին պէյ Ստե- փան, Տեարք Տր. Հատտատ, Անթուան Բրիմի և Զարեհ Սըվազը։

Դագաղը ծածկուած էր բազմաթիւ և զեղեցիկ պսակներով զորս զրկած էին Ժամկոչեան և Շէրիտճեան ընտա- նիքներն, Հայոց Առաջնորդարանն, Արտաքին գործոց նախարարութիւնն, Արբահամ պէյ Բարթող, Տիար Զարեհ Սըվազը, Տեարք Գ. և Կ. Միքայէլեան, Տէր և տիկին Էրիզէր, Դեղարան խուրի, Մ. Միլէի ընտանիքը, Տէր և Տիկին Լ. Միքայէլեան, Տեարք Պ. և Կ. Օհանեան, Տեարք Հ. և Գ. Չայ- լապեան, Տիար Կ. Ժամկոչեան, Տիար Ա. Ղազարեան, Տէր և Տիկին Ինեստ Գասթէլլի, Տեարք Տր. Ա. Թէօֆիլ, Տր. Զօրիան և ին. և ին. . .

Խմբագրութիւնն պարտ կ'ըզայ այս սրտաճմլիկ մահուան առթիւ իւր ցա- ակցական զգացումներն արտայայտել ծնողաց, ամուսնոյն և համայն գեր- դաստանին։

ՉԻՆԱՍԱՆ

(Յ. ՍԵՔՍԱՆ)

Տիկնայր և Տիարք, Նախ պարտիմ շնորհակալութիւն յայսնել Լուարան-Ընթերցատան յարգելի Գործ. Ժո- ղովին, որ իր այնչափ օգտաւէտ ձեռնար- կին այսինքն եղիպտարակ Հայ ժողովուր- զին միտքը և սիրտը կրթելու համար հաս- տատուած սոյն լաւարանին մէջ առաջին ան- գամ խօսելու հրաւիրելու պատիւը կ'ընէ ինձ

ալ, հրաւր գոր կարելի չէր ինձ չ'ընդու- նիլ, վասն զի աւելորդ կը համարեմ՝ անգար մը եւ ծանրանալ այն կարեորութեան և օգ- տակարարութեան վրայ, զոր ունի սոյն օրի- նակ հաստատութիւն մը. արդէն քանի քանի անգամ յեղյեռած և ճառուած ճշմարու- թիւն մ'են անոնք. հետեւաբար ուղղակի կ'անցնեմ մեր նիւթին։

Մեր սոյն բաղուածին, (վասն զի քաղ- ուած մըն է այս) նիւթը կազմող երկրին վրայ խօսելու համար, պատշաճ կը համարեմ՝ ա- խապէս զատակարգել այն բաժանումները ու- ռոնց վրայ կարգաւ պիտի ջանամ յարգելի ունկնդիրներու ու շարքութիւնը հրաւիրել։ Պիտի աշխատիմ նախ խօսիլ Չինական ըն- տանիքին վրայ, ապա կրօնքի, ամուսնու- թեան, կնոջ գասակարգելուն, նախապատ- մական ժամանակաց, աշխատող գասակար- գելուն, զուարճութեանց, և մի քանի ուրիշ հետաքրքրական պայմաններուն վրայ։

Եթէ խօսելիքներուս մէջ՝ ունկնդիրներուս համար նոր չեղող բաներ պատահին, կան- խաւ ներդաստութիւննիդ կը խնդրեմ։

Ընտանիքի հաստատութիւնը հիմն է որ- ուն վրայ կը յենու ընկերային և կառավար- ական բովանդակ շէնքը Չինաստանի մէջ։

Չինական ընտանիքը կրնայ նմանցուիլ քաղաքային ընկերութեան մը որ համերաշ- խութեամբ կապուած է։ Անոր բոլոր անդամ- ները պարտաւոր են իրարու ձեռնտու ըլլալ և միասնաբար ապրիլ։ Պատմութիւնը կը յի- շէ Չանկ անուն վաղեմի նախարար մը, որ ինք սերունդներէ սերած իր ընտանիքին բո- լոր անդամները իր յարկին տակ համախըմ- բած էր։ Այդ օրինակը կը յիշուի իբր օրի- նակ մը որուն Չինացիք պարտաւոր են ջա- նալ հետեւելու։

Ընտանիքի անդամներն իւրաքանչիւրը պարտի այնպէս իմն վարուիլ որ համաձայնու- թիւն և միասնութիւնը գոյանան անոնց մի- ջեւ։ Ասի պարտականութիւն մըն է։

Եթէ պատահի որ այդ համաձայնութիւնը խանդարի, եթէ ընտանիքին մէջ կարգա- պահութիւնը չկրնար մնալ անխափան, այն ատեն օրէնքը կը թոյլարէ համայնքին ինչ- բերը բաժնել, բաժանուլ որ արական սեռի բոլոր անդամներուն մէջ հաստատապէս տե- ղի կ'ունենայ։

Իշխանութիւնը ընտանիքի մէջ երկցա- գունին կը պատկանի, և կեանքի կարեւրա- գոյն պարագաներուն մէջ, անոր՝ կը հարցը- նեն թէ ինչ որոշում պէտք է տալ։ Կա- ուսվարական պէտի մը բոլոր պաշտօններն ունի ան. բոլոր պաշտօնագիրները անոր կողմէ կը ստորագրուին յանուն ընտանիքին։

Իւրաքանչիւր ընտանիք ունի իր կանոնա- գիրն, յորում սովորութիւնք ճշիւ սահման- ուած են, տեսակ մը գրաւոր իրաւագիտու- թիւն է ան։ Ընտանիքին սեպակականութիւնը եղող բոլոր ինչքերը արձանագրուած են հոն իրենց անձնիք սահմանումովը։ Կար- ծես թէ կտակ մը կը կարգաւ։ Այսպէս, այս ինչ հողին արդիւնքը ձեռքբերուն համար ու- ճիկներ ստեղծելու սահմանած է. այն ինչ հողին արդիւնքը իրենց ընտանիքին երբ տուող լինցող երիտասարդներուն յատկացուած գումարները ապահովելու կը ծառայեն։ Մասն- կրտոց գաստարակութեան ծախքներուն մա- տակարարութեան ծառայող գրամն, ամուս- նացեալ աղջկանց նուէրներուն ծառայող գումարը, ի մի բան կանխատեսուած պետ- քերու պահանջած բոլոր ծախքերը հասերու զլխուն մէջ արձանագրուած են։

Կանոնագիրները ոչ միայն կ'որոշեն նիւ- թական կեանքի պայմանները, անոնք կը ճշգրտ նաև պարտականութիւնները, և այս ինչ յօդուածը կը սահմանէ պատիժները որ պիտի տրուին ընտանիքի անդամներէն անոր՝

որ պատժապարտ բնթացքով մը կամ անա-  
ռակութեամբ, ընտանեկան պատուոյն ծանր  
հարուած մը տուած է:

Հինգ ընդհանուր սկզբներ կան որ, դաս-  
տիարակութեան միջոցաւ, կը կազմեն և կը  
պահպանեն ընտանեկան պաշտամունքը.  
Այդ հինգ սկզբունքներն են. հաւատարմու-  
թիւն առ վեհապետ, յարգանք առ ծնօրս,  
առն և կնոջ միարարութիւն, և բարբեղ  
միջև համաձայնութիւն, բարեկամութեան  
սիրոյ մէջ յարաբերութիւն:

Ձիւնաց մէջ, ձախորդութեան մէջ ինկած  
բարեկամներու օգնելը սովորութիւն մըն է,  
ոչ թէ առաքինութիւն մը:

Ոչ միայն հարուստները կօգնեն իրենց  
ղեկավար բարեկամներուն այլ նաև աղ-  
քատները իրենցմէ աւելի աղքատ բարե-  
կամներուն ձեռնաու կ'ըլլան:

Եթէ գրագէտ դաստիարակին կը վերաբերիս,  
բոլոր գրագէտ բարեկամները իրենց մէջ կը  
հանդանակեն ջիւղի օգնելու համար: Գոր-  
ծաւոր ևս, արհեստակիցները նոյն բանը  
կ'ընեն ջիւղի: Նոյն դաստիարակին վերաբե-  
րող անձանց միջև այս է սովորութիւնը: Նոյն  
իսկ բարեկամներու մէջ և հանդանակութիւններ  
կ'ըլլան իրենց մէջ և մեկուսի ամուսնութեան  
նպատակու համար. նամանակաւ հանգա-  
նակութիւններ կ'ըլլան բարեկամի մը այրի-  
ին օգնելու կամ անոր դաւանները կը թելու  
համար. մարդկային էակը առանձինն չէ:

Կրօնքի պաշտ, անոնցմէ շատերը կը հա-  
ւատան թէ Աստուած ամեն շնորհները կը  
հասկնայ, և մանաւանդ այն շնորհն որ կ'ար-  
տայայտուի լուծեան մէջ հոգեոյն ներքին  
շարժումներովը: Անոնք ունին, շատ մը ու-  
րիշ ազգերու պէս, հոգեով պաշտողներ և  
շրթունքներով պաշտողներ: Անոնք ունին  
տեսչական (այսինքն էտէալ) կրօնքը, այն  
որ մտամտութեան կը պարտաւորէ, և ունին  
երկրաւոր կրօնքը, այն որ բարոյականութեան  
և սրտանցներու ցոյցներուն կը պարտաւորէ: Ի  
մի բան, կը ճանչանան կեղծը և անկեղծու-  
թիւնը:

Կրօնքները մտքի հետ նոյն մակարդակին  
վրայ են: Ձիւնացի ունին գրադրած կը-  
րօնքը, որ կը համապատասխանէ պետու-  
թեան ամենէն լուսաւորեալ մարմնոյն մտա-  
ւոր մշակման վիճակին. կոմիտիի սիրօնքն  
է ան, կամ լաւ ևս է ընդ' անոր իմաստա-  
սիրութիւնը, վասն զի անոր վարդապետու-  
թիւնը՝ վարդապետութիւնն է զպոքոյն մը  
պարագային՝ որ թողած է բարոյական ա-  
ռածներ կամ ճշմարտութիւններ, բայց որ  
մարդուն ճակատագրին և Աստուածութեան  
բնութեան վրայ հաշիւներ կամ սահմաններ  
ընելու մէջ չի մտած:

Կոմիտիի սիրօնքն է Բրիտանոսի թուա-  
կանէն առաջ Չ. դարուն, և իր յիշատակը  
Չինաստանի մէջ այնչափ ազգայնութիւն ու-  
նի որ չկայ քաղաք մը որ ի պատիւ անոր  
կանգնուած մեհան մը չունենայ: Իր փոխ-  
ստիարական զրօնքները կը կայանայ զը-  
խառնարակ մարդկային սրտի դաստիարա-  
կութեան մէջ, և դաստիարակութեան բառը  
ճիշդ այն բանն է որ այդ վարդապետութեան  
նպատակը լատիներէ ցոյց կու տայ: Դաս-  
տիարակը, կը թելու, այսինքն վեր բարձրացը-  
նել գեանէն անգործ (անշարժ) մարդը՝ գոր-  
իւր կարողութեանց յոռի գործածութիւնը  
նուստատացուցած ու խոնարհեցուցած է՝ բա-  
նալ անոր աչքերը ցոյց տալու համար ան-  
սահման անձայրափակ ուշադրելու կարող-  
տաղեղ պայմանաւորութիւնը. քիչ քիչ վար-  
ժեցնել զայն իր ոչնչութենէն զուրս ելլելու  
և ինքզինքը՝ միտք ու ոգի, խորհող, կամե-  
ցող և ճանաչող էակ ճանչնալու: Խորհել,  
կամենալ, ճանչնալ, ասոնք են երեք աստի-  
ճաններն այդ դաստիարակութեան որ զարթ-

նուսով կը սկսի և գիտութեամբ կը լրանայ,  
և որուն բանաձեւալ բովանդակութիւնը՝ փի-  
լիսոփայութեան՝ մարդկութեան վրայ գրած  
ամենէն զեղեցիկ առածները կը պարունակէ:

Պէտք չէ սակայն կարծել թէ կոմիտի-  
սի վարդապետութիւնը լոկ խրատներ կամ  
առածներ կուտայ առանց ճշգրիտ մեթոտ  
մը ցոյց տալու: Այդ վարդապետութեան մէջ  
շատ ճշգրտաւանդ ուսուցում մը կայ և ասի  
արդարև գործնական գասընթացք մըն է  
բարոյական դաստիարակութեան: Սկզբունքը  
որուն վրայ հաստատուած է այդ դրութիւնը,  
պահպանել է բանականութիւնը անյեղի և  
որոշ սահմաններու մէջ: Կոմիտիի սիրօնք  
թէ մարդկային սիրտը անփոփոխելի իտէալ  
մը ունի, այսինքն արդարութեան իմաստու-  
թեան, և թէ հինգ զգայարանները՝ զայն  
այդ իտէալէն շեղեցնող և խտորեցնող հը-  
րապոյրի կարողութիւններ ունին: Արդ, կա-  
մաւորապէս զնոյնիլ այդ հրապարանաց վը-  
տանգներուն դէմ, ահա այդ է այն միջոցը  
զոր կոմիտիի սիրօնք կը խրատէ իր աշակերտնե-  
րուն, և այն անյաղթելի զէնքը զոր անոնց  
կուտայ, յարգանքն է:

Յարգանքը՝ այն ընդհանուր զգացումն է որ  
կը տարածուի կենաց իրաքանչիւր գործո-  
ղութեան վրայ: Ապականութեան առաջին  
պատճառը անփութութիւնն է և զանցառու-  
թիւնը, արդ, բնականութեան համար զանցա-  
ռուի բանականութիւնն է ըլլալ:

Անփութութիւնն է որ ձեռքը կը մտնէ ըզ-  
մեղ սովորութեան զոր արհամարհանքով երկ-  
րորդ ընտելութիւն կը շած են, իբրև թէ բնու-  
թիւնը մի և անբաժանելի չըլլար: Յարգան-  
քն է որ, կենաց ամեն գործքերուն վրայ, մա-  
նաւանդ ամենէն անշնչանքներուն վրայ իշ-  
խելով, ապառոջ և վնասաբեր ազդեցութիւն  
ները կը հեռացնէ անոնցմէ, և այսպէս, մե-  
տաւորէ մտաւար, կը կատարէ դաստիարա-  
կութեան համբերատար գործը:

Կոմիտիի սիրօնքն զետեղ կուտայ թէ հինգ ըզ-  
գայարանները, այնպէս որպէս կը սահման-  
ուին, կը կացուցանեն կարողութիւններ, այլ  
ոչ թէ ձիւրքեր: Մարդ սակայն ձիւրքեր ըն-  
դունած է բնութենէն, և կոմիտիի սիրօնք  
կը ցուցնէ. անոնք են, յարեմտից կերպարան,  
անուշ խօսակցութիւն, սուր լսելիք, պայ-  
ծառատես աչք, խորհրդածող միտք: Մար-  
դու կարողութեանց այդ մասնաւոր վիճակ-  
ները պէտք է որ անդու անպարզ զարգա-  
ցուցուին: Կոմիտիի սիրօնք փիլիսոփայական զը-  
րութեան հիմը ուրեմն յարգանքն է, ինչպէս  
որ սերն է աւետարանի վարդապետութեան  
հիմը:

Կոմիտիի սիրօնքն իր վարդապետութեան մէջ  
շատ մը փոքրիկ միջոցներ ունի որ յաղ-  
թողաբար կը մարտնչին մեծամեծ մոլութեանց  
դէմ: Օրինակի համար, կ'արդիւն նախապա-  
շարուր կամ կանխակալ կարճիքը, կ'ըսէ.  
«բոլոր մարդիկ համանման են, հիններն ալ,  
նորերն ալ ինչ որ բոլորն է ոմանց  
համար՝ բարին է նմանապէս այլոց հա-  
մար. անոնք չեն տարբերի իրարմէ: Անոնց  
վարձունքին իմաստութեան մէջ նմանիլ անոնց  
և հետամուտ ըլլալ զանոնք ճանչնալու,  
ահա այս է հետեւելիք յաւազոյն ճամբան  
ինքզինքը ճանչնալու համար»:

Ի մի բան, կը ջանայ զոյաջնել ամբող-  
ջական հայեցակէտ մը որ պիտի համախմբէ  
բոլոր խեղճերը, ոչ ոք պիտի կրնայ զերծա-  
նիլ այդ մաքնիսականութենէն և, առանց  
թաքուն մտածման, առանց ուրիշ իտէալի  
մը յղացման, բոլոր միտքերը պիտի գառ-  
նան գէպի բարոյական աշխարհին արեգա-  
կը՝ բարեբար լոյսը ընդունելու համար:  
Կոմիտիի սիրօնքը նախնական ձեւին  
մէջ չունի որ սպասելիք, ոչ բուրմ. վերջէն  
վարդապետութեան վրայ աւելցուցին մի-

քանի արարողութիւններ որ պաշտամունքի  
մը կանոնները հաստատեցին: Բայց այդ  
արարողութիւնները շատ քիչ կը դրազեցնեն  
սկզբունքները նկատող միտքերը:

( Շարունակելի )

ՄԵՍ ԴԻՔԱԼՈՑՆԵՐԸ

Այն յիսուն և ութ պատասխանե-  
րէն զոր ստացած եմ մինչ այսօր, գը-  
րաւոր թէ բերանացի, յաջորդաւոր  
պիտի հրատարակենք ամենէն հիւս-  
սուրիչները: Խրատույս մ'է այս մեղի  
համար, որով պիտի լծելադրուինք յա-  
ճախ ամէն տեսակ հարցոյ մեկը ու զ-  
ղել մեր դրասէր բարեկամներուն, նո-  
րալարժ գրիչները յառաջ մղելու,  
միտքերը զարգացնելու ու մեր դատու-  
լու եղանակը բնութագրելու միակ  
փափաքով:

Սիրելի Ս. Օ.

Ամենէն մեծ գործարարները՝ ըստ իս՝ Նյա-  
յիններն են, որովհետև ամենէն շատ բը-  
զայնտներն են անոնք, իրենց կազմուածքին  
կամ խառնուածքին յարափոփոխ ցնցումնե-  
րուն ենթակայ: Անոնց զարգացումները միշտ  
սեղանուն են, որ զիրենք յաճախ կատար-  
չին խելագարութեան: Խոյանքը կը սիրեն.  
անոնց ձգտումները չի սահմանափակուի այս-  
կամ այն իտէալին մէջ, ու ամէն բանի մէջ  
միտքնականութիւնը կը տաղտկացնէ զիրենք:  
Նեղօրիտ են, յաճախ ու երբեմն ալ այն-  
քան մտածկոտ, որ խոյացող փիլիսոփայի մը  
ձեռ ունին՝ կը մեղքաւոր զիրենք, իրենց ցըն-  
ցումները պարտաւոր վայրկեաններն են այդ  
վայրկեանները: Շատ կը պահանջեն, բայց  
քիչով կը զոհանան. ամեն ինչին բան կը  
զանազան զիրենք ու ամեն ինչին բանի մէջ  
ալ հաճոյք մ'ունին, խեղճե՛ք: Անոնց բո-  
լոր գործերուն մէջ ալ շատ քիչ զեր ունի  
ըղեղը, բայց իրենք մեծ բաներ կընդունա-  
րեն այն տեղ: Իրենց սիրական մոլութիւն-  
ներն ունին զոր չեն ծածկել, և՛ աւելի ճիշ-  
դը՝ չեն կրնար ծածկել, ասոնց մէջ զիրենք  
ամենէն շատ հատցնողը, փառքն է, որուն  
համար ամեն բան կը զոհեն:

Մէկ բառով կոզկերին, մէկ բառով կը  
վշտանան ու կը յուզուին, անոնց յուզումը,  
սակայն, ամենէն աղօղորն է որովհետև ամե-  
նէն անկեղծն է: Երկրայինները շատ ու շատ  
կազմեն անոնց, և իրենք ալ միշտ երկրային  
զատողներ ու յոռի գատողներ են ընդհան-  
րապէս:

Չզայինները իրենց առանձին աշխարհը  
ունին, առանձին հայեցակէտը, խորհելու  
զղաւու առանձին ձեռ. «բափրիս»ներ ալ  
ունին, եթէ իրենց բոլոր էութիւնը «բափրիս»  
մը չէ արդէն. մերթ տղայ մը, մերթ զա-  
ռամեալ ծեր մը կը դառնան անոնք, ու զեռ  
շատ ձեւեր կանեն:

Ահա՛ աւելի կամ պակաս Չզայիններու  
հոգեբանութիւնը, որ ամենէն վիւրիւն կար-  
գացուելիքն է, ի մի բան անոնց ամբողջ  
կեանքը (բացառաբար) վերացականութեան  
կեանք մըն է՝ ուր ցնցումն ու տանջանքը  
ամենէն մեծ տեղ կը բռնեն:

Ա. Չ.

— Իրաւունք ունի մեր հոգեբան թղթա-  
կիցը. այս կարգի եմբարային էակներ պէտք  
էր որ տարբեր աշխարհի մը բնակիչները  
եղած ըլլային:

(Ս. Օ.)

Երբեք չեմ կրնար ընդունիլ թէ՛ զանուի  
գործարար մը կամ գործարարութիւն մը որ ա-

մենէն մեծը ըլլայ: Դիտարարութիւններն միշտ  
միևնոյն ազդեցութիւնն ունին ենթակայ զը-  
բախտին վրայ, թէպէտ կը տարբերին ան-  
ոնք պարագաներով ու տեսակով:

Չորօրինակ, եթէ մեծահարուստ ու բարե-  
կեցիկ տան մը վեպի ազդեցութիւնը գահա-  
վիժումը գործարարութիւնն նկատուի՝ միթէ ան-  
կէ նուազ գործարարութիւն է անհաւատարմ  
կենակցով մը կենակցելը:

Եթէ անգուժ և տարածամ մահը իր ճի-  
բանները ձգէ մէկի մը վրայ որ հազիւ 20-23  
գարուններ բուրած է, միթէ անոր հաստար  
գործարարութիւնն չէ՞, ուրիշի մը մշտապէս և ան-  
բուժելի հիւանդութիւնը:

Դրանմէտով մը ամուսնանալու տենչն  
տառապող երիտասարդի մը գործարարութիւնը,  
ինչով կը տարբերի անգրամօթիս ու ազիզ  
օրիօրի մը գործարարութենէն (\* \* \*) կայն:

Հետևաբար այս օրինակները ինձի խոր-  
հրածնէ կուտան թէ արդէն մեծ գործարանե-  
րը եղած են ամեն անոնք որ առաջին օրէն  
իսկ՝ աշխարհ գալու որոշումը տուած են:

Կ. Ե.

Աստուած չը սիրողը, թերեհաստաները,  
անաստուածները, մեղաւոր մարդիկները՝ ու-  
րոնք փրկութիւն չեն գտնար մեռնելու առաջ,  
մեծ գործարարներ են, քանի որ աշխարհիս  
փառքն ու երջանկութիւնը փուռ բաներ են,  
և թէ յաւերժական երանութիւնը, անպար-  
մանելի մեծ գործարարութիւնը մահկանացու  
մարդուն կուտի գերեզմանէն անդին:

Աստուած հաւատացեալներ, անձնուրաց  
բրիտանիաներ ըլլալ պիտանք միայն,  
ու պիտի տեսնէք որ չկայ աշխարհիս մէջ  
մարդուն համար բան մը՝ որ «մեծ գործար-  
արութիւն» համարուելու արժանի ըլլայ:

ԳՍՀԱՆԱՅ ՄԸ

Ս. Գրոց մէջ մազ չը ճերմկեցնողները «մեծ  
գործարարներ» են (չափազանցութիւն, չէ...)

ՅՈՎՆԱՆ

Շարաթ օրեր սուրբ չը պահողը, մեծ  
տեղ բանջար չուտողները հանցեք «մեծ  
գործարարներ» կարգը դասել:

Աղօթներ անոնց համար, որովհետև եր-  
ջանկութիւնը անոնցմէ շատ հեռու է (սու-  
րազանդ):

ՈՒՂԱՓՈՒՍ

Մեծն Նափուլուն մեծ գործարարներու ամե-  
նամեծ գործարարը եղաւ՝ երբ այնքան մեծ ու  
փառապանծ աշխարհակալութիւններէն յետոյ,  
իրեն ճակատագրուեցաւ մեռնիլ տարագրու-  
թեան գոյնըներ բանտին մէջ, ու երբ իր  
մեծ-Հայրենիքը չզիտեր շարունակել մեծ  
գերը՝ որ իրեն կտակուած է:

ԱՐՍՄԻՍ

Ինչ որ ալ ըլլայ իր դիւցազն Հայրենի-  
քին վաղուան բաղդը, գէթ մէկ օր Ժեկե-  
րալ Բրօնիէ աշխարհի մեծ գործարար եղաւ,  
երբ անհաւատար կոտի մը տաք վարկե-  
նին գերի ինկաւ Ալպիոսի ձեռքը:

Մ. Վ.

Հոգ չէ թէ մեռած ըլլայ. մեր վերջին  
թագաւորը Լեոն Չրդ. մեծ գործարար լ'եղաւ  
ու է, քանի որ իր փառքն ու գանդ կորսնցը-  
նելէ վերջ՝ իր թողածնախոտ քաղաքը զարե-  
րէ ի վեր կը միայ աւերակներու տակ, ըս-  
տիկութեան լուծին տակ անհետանալու են-  
թակայ...

ՀՍԹԵՆԱՍԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐԿԷՆ

Պերլինի մէջ տարածուած գրոյցի մը նա- յերով Չարլզ Վիլհէլմ կայսր և Անգլիոյ թա- գաւորը Օգոստոս 15ին պիտի տեսակցին Մայնի մէջ:

—Լոս Սալզպի Նոյեմբերին վերջապէս պիտի բաշտի քաղաքական կեանքին:

Լորտ Սալզպիի Վիլհէլմի մէջ ճառ մը խոսելով ըստ թէ Անգլիոյ մէջ գտնուող Պո- կրատիկներուն խոսած ճառերը կը բաշտու- են Պոկրատիկ Մակայն հաստատուող Վարչա- պետը, Առաջադրութիւնը որոշած է պատե- բարձր յաշտութեամբ ի գլուխ հանել:

—Տեյլի-Մեյլ կիսանայ թէ Ռուսիոյ ճա- ղանի միջև զինակցութիւն մը պիտի կնքուի բիշ տոնէն, Անգլիոյ զէմ:

—Նիւ-Նորթ պորթլանտի գործարարներու գործարարը վերջով ճամբատութիւններ տուաւ Չարլստաուդներու թիւը 200,000ը կանցնի:

—Յրանաւ սոխ է մը ի վեր է որ Յրան- սական Առաջադրութիւնը կարեւոր քանա- կութեամբ ապստամբեր և այլն կը զբի- Մարտիկայն Անգլիոյ այս պատրաստու- թիւնէն շատը պատերազմ կը հետեցնեն:

Ա Չ Պ Ա Յ Ի Ն

Հեռուէն Նամակը խմբագրութեա- նըս ուղղուած է հրատարակելու իրենց- ըստի, ինչ որ սիրայօժար կընենք, երբ հանրութեան արդար տրտուել- ները սյս կը պահանջեն: Անոր պա- ըունակութեանը վրայ կը հրատար- ենք անշուշտ Աղբ: Առաջնորդ պարտին ու չը մեր փափաքն ըլլալով Առաջնոր- դարանի և Ժողովուրդի միջև գծուու- թեան չարժանի թիւերը վերցած տեսնել:

Տէր Խմբագիր. — Որակութեամբ կը տեսնեմ որ «Նոր-Օր» ժամանակ մ'ի վեր շաա կզարդի կը եկեղեցիով, վարժարանով, Առաջնորդարանով, Առաջնորդով, քահանա- ներով, վերին և վարին-Եղիպատով, է քա- նի որ վերին-Եղիպատի խօսքը կըլտի, թող առէք որ քիչ մ'ալ ձեզի յիշեցնեմ սա Մարմնայի գերեզմանատան «Անշատող Պատը», որուն շուրջը ասիէ երկու տարի առաջ յարուցած փոթորակից ազմակը ձեզի անձնօթ ըլլալու չէ անշուշտ: Եւ եթէ այն արդար գարոյթը որ առժամայէն թու- ցած կը տեսնուի այսօր զրկեալներու շաա իրաւամբ ռիսպահ սրտերուն մէջ, պատճառը ուրիշ բան չէ, բայց եթէ անգութ ճակա- տագիրը որ մեզ հաշկան հաշածական ըրաւ: Ժամանակի կարօտ ենք, քիչ մը կազար- ուելու ու վեր շարժելու համար մեր պար- տասած խեղցնոր դուրը: Թող միայն որ- չափ որ կուզէ մեր սրտին մէջ սուրբ գայ- բութի մը անշէլ կրակը: պիտի դայ օրը երբ խեղճ գաղթականներն ալ գտնեն իրենց բարոյական թէ նիւթական ուժերը, ու այն ատեն կարող ըլլան յիշեցնել մեր մենձ մար- զիկներուն, թէ գերեզմանատան մը մէջ մեծ թէ փոքր, հարուստ թէ աղքատ, տեղացի Հայ կամ գաղթական, հաւասար ըլլալու են, քանի որ ամենքս ալ միևնոյն ազգի գաւակ- ներն ենք և թէ՛ յանկոյտ գերեզմանին՝ ա- մէնքս ալ միևնոյն անշուշտ զիակները պիտի գտնանք: «Տող կը և ի հող դարձցիս»:

Խորութիւն՝ ապրողներու հարուստ, աղ- քատ, բարտաւոր կամ անբարտեւրու դա- տակարգերուն միջև, խորութիւն՝ Առաջնոր- դարանի մէջ, խորութիւն՝ եկեղեցիին մէջ խի. պահ մը հասկանք ու լեզունի կա- պինք, բայց, դուք ըսէք, ինչ կը նշա- նակ գերեզմանատան մը մէջ գոթիային ան-

շատող պատ մը, որուն գեմ առաջին բողո- ճողները բուն իսկ գաղթական մեռելները պիտի ըլլային եթէ . . . Ո՛ր, ս'ր մի քաղա- քակրեալ, ս'ր մի վայրենի երկրի մէջ իսկ տեսնուած, լուսած է այսպիսի այլանպակ, անձոնի, անորակիկ անիրաւութիւն մը. . .

Տնտեսական խնդիր, հասոյթի աղբիւր, պիտի ըսէք. այս ամէնը լաւ. բայց քար գայթակղութեան եղող սե պատի մը անհե- տացումը արդեւք մը չէ որ տուրք վճարող- ները շարունակեն սալ ինչ որ վճուած է, ու՛ր էր թէ վճուած չըլլար:

Բարեբաղդարար, կիմանամ թէ Մարմի- նայի Հոգաբարձութեան հոգին եղող այն բարձրաստիճան անձնատրութիւնը՝ որ այդ անիծեալ պատի խնդրոյն մէջ մեծ դերը խաղցած էր, հրաժարած է եղեր իր պաշտօ- նէն, ու հոգաբարձուներ կը մնան այնպիսի- ներ՝ նուազ նիւթին փարսած բորեկիղճ ու մարդասէր անձեր, որոնց բարեկեղծութեան ու մարդասիրութեան գասասանէն՝ յանուն զրկուած գաղթականներուն, յանուն անի- ըուուած մեռելներուն, անխորութիւն կը հայցեմ, արդարութիւն և «Անշատող Պա- տին» շնչումը կը պահանջեմ:

Դուք ալ մի գաղբիք գրել, Տէր Խըմ- բագիր. սրեցէք սուր զրիշնիդ, խայթեցէք, բողոքեցէք, յարձակեցէք. պաշտպանեցէք Ժողովուրդին շահերը, քանի որ դուք կու- ուած էք ըլլալ Ժողովուրդի մը շահերը պաշտ- պանողը, և Ժողովուրդը պիտի գնահատէ ու պիտի պաշտպանէ ձեզ, լիտակ եղիք:

Ք. ԹԵՎԷԻԹԷԱՆ

—Սրինք զրիշնի, խայթեցէք, բողոքեցէք, յարձակում յարձակումներու վրայ բնէնք, հանրութիւնը պիտի պաշտպանէ մեզ . . . Զքի թերթ կարգադրողներու պատկանելի թիւը ու ամենաչնչին բաներու համար կաւրճի գը- ծով թերթ մերձողներն ի մի տեսալ:

Կը յիշեցնենք մեր պարսն բողոքողին թէ՛ միայն լրագրին զրկուող գործ չտեսնուիր. պէտք է որ Ժողովուրդը ինք միջոց մը փըն- սրուէ ի պահանջի հարկին իր արդար սըր- տուններուն զհաջում գտնելու համար, երբ անաշտ և անշահակնոր մամուլի մը ձայնը անդեղի մնայ:

ՈՐԲԱՆՆԱՍ ԸՆԿ. ԱԿՆԱՅ ՀԱՅՈՅ

Ընկերութեան անդամներէն Տե- արք Գրիգոր Պէշիւհան, Յակոբ Պէշիւ- հան և Վահան Ասիլեան չեն վճարած իրենց բաժնեկիցիներն առաւելելով թէ՛ վստահութիւն չունին Գործ. Ժողովոյ անդամներուն վրայ ու զեղծ մեներ կը գործուն են եղել: Միևնոյն ժամանակ այսպէս ալ կը տարաձայնեն ընկերու- թեան անդամներուն մէջ, ի վնաս տուապեալ և անոք որոյց:

Արդ կու գանք հրատարակել յիշեալ պարտներն որ վտխար պէտք եղած լայնատրութիւնները տալ Ժողովոյս, հակառակ պարագային իրենց նպա- տակն ոչ այլինչ է, այլ պարզապէս այսպիսի անուրբ միջոցներով դատ- րեցնել իրենց անդամակցութիւնը, ինչ որ ինքնին արժանապատուութեան ըզ- դացում չունենալու ապացոյց մ է:

Գործ. Ժողովոյ Ատենագիրը Ատենագետ Ս. ԹԱԹԱՐԵԱՆ Խ. ՊԵՊԷՐԵԱՆ 11 Յուլիս Գահերէ

Պ. ԱԳԱՍԵԱՆԻ

(ՄԱՀՈՒԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ)

Հայ ներկայացուցիչներ Նախիջևանի հա- սարակութեան ծանօթ էին արդէն 1860ին ի վեր, երբ Պատուաւորներ իր խմբով Պո- ւսն եկաւ ներկայացուցիչներ տալու. այդ խում- բէն կը ծնին մեր բեմի նշանաւոր ոյժերից երկուքը՝ Ագամեան և Թուրեան, որոնցմէ առաջինը այն ժամանակները զեռ նոր բեմ մասած էր և հազիւ 20 տարեկան կար: Հայ զերասանական խումբը Պատուաւորներ զե- կալարութեամբ երեք ւեցօթ շարունակ ներ- կայացուցիչներ տուաւ Նախիջևանի աղաւթին խեղճուկ բեմին վրայ, երբեք յաշտութիւն ունենալով և երբեք շատ թշուառ ու անկա- նելի նիւթական վիճակի մէջ ինչպիսի: Վեր- շապէս Պատուաւորներ իր խմբով հետացաւ Նախիջևանից. մնացին միայն թուրեանը և Ագամեանը, ապա ինչպիսի իրենց վրձինին, հայթայթելու իրենց օրական պարերը: Ժա- մանակակիցները շատ ծիծաղելի Անկեթօր- ներ՝ կը պատմեն Թուրեանի այդ շրջանի կեանքէն: Մինչև հիմա ալ Նախիջևանի մէջ կը տեսնուի երկարակնի տուն մը, որուն ստորին յարկը կապին եղեր Թուրեան և Ագամեան. կը պատմուի որ Թուրեան տան յաճախողները զարմացած էին, տեսնել բոլոր սենեակի յատակը արեան մէջ թա- թախուած:

—Սա ինչ է, Պ. Թուրեան, դուք զե- րասաններ էք, թէ առաջակներ:

—Ասիկա ոչինչ, պարապ ծածկերուս պա- հուն քիչ մը օրոտրութեամբ կը պարապիմ տանա տալը:

Եւ իրաւ որ օրոտրութեամբ կը պարա- պէր հանգուցեալ Թուրեանը. ստորութիւն է ունեցած նեղ օրերին պատահանի առա- ջը կորեկ ցանել, ուրից հրապուրուելով, զրացիներու հաւերը, բազիրը և սաղերը հան կուգային: Թուրեան՝ պատահանի ետեր գարունակալ կապաւր, մինչև որ թաշուհե- րը լիտահ մտտնային պատահանին առա- ջը և ապա թեք ձգելով կը բռնէր պատահած թաշուհի վիզէն, կը մտքէր, կը տապկէր և իր անբաժան ընկեր Ագամեանի հետ անուշ կ'ընէր:

Այսպիսով շատ կերած բայց շաա ալ նեղ օրեր անցնել յետոյ՝ Ագամեան ու Թուրեան կը մեկնին զէպ Պոլիս, տեղա- կան թատերաւիճակներուն սրտին մէջ թողնով անմոռանալի յիշատակներ:

Մինչև 1880 թուականը Հայերէն ներ- կայացուցիչներու գործը զրեթէ բոլորովին մոռ- ցուած էր, երբ 1891ին կազմուեցաւ մի բաւական ստուար և ուժեղ թատերասիրաց ընկերութիւն, որը լսելով Ագամեանի հոչա- կը՝ կը փութան զինքը հրաւիրել Տիգրիս: Թատերասիրաց ընկերութիւնը հարկաւոր ճանապարհահատար տալով իր անդամներէն մէկին՝ Պ. Կարապետ Թիթրեանին, կը յանձ- նարար զին անձամբ երթալ Տիգրիս հը- բաւիրել Ագամեանը և պայմաններ կապել անոր հետ: Պ. Թիթրեանը, որ քաղաքային բանկի զերեկաորն է և երկուստար ժամա- նակները Ագամեանի անբաժան ու մօտ ըն- կերն է եղած, երկու տարի շարունակ մէկ սենեակի մէջ ապրած ըլլալով անոր հետ, միջոցն է ունեցած ի մօտոյ ծանօթանալու մեծ ողբերգուի անհատական կեանքին և նո- րա ընտրութեան հետ:

1884 տարուան ամառն էր, երբ վերջա- ցաւ Ագամեանի թատերական փառաւոր գոր- ծունելութիւնը: Ագամեան պարագն էր այն ատեն, հետեւաբար չի պիտի ուզէր մերժել այսպիսի առաջարկութիւն մը, որը իր ապա- գայ փառքի և հաշկի հիմնաքըրը պիտի ըլլար: Նախիջևանէ նա գնաց մոսկուա, փեղբապուրկ և Ռուսաստանի ուրիշ քա-

ղաքներ: Ագամեան լաւ ընդունելութիւն կը- նէ Պ. Թիթրեանի, շատ համակրելի տալա- տրութիւն թողնով ասոր վրայ. — «Կարծես սարիներ ծանօթ լինէր հետս, այնքան սի- բալի և անկեղճ վերաբերմունք արտայայտեց զէպ ինձ» — կը պատմէ Թիթրեանը. — «Միւս օրը ես յայտնեցի իմ Տիգրիս գալուս նը- պատար: Ագամեանի ուրախութեան չափը ու սահմանը չըկար, երբ իմացաւ, որ զին- քը հրաւիրուած են Նախիջևան, բայց երբ հարցը հասաւ պայմաններին՝ նա այնպիսի անիրագործելի և դժուարին պայմաններ ա- տաւարեց, որ ես ստիպուած պիտի լինէի գատարկածան հեռանալ Տիգրիսից, առանց կատարելու իմ վրայ դրուած պարտաւորու- թիւնը: Բայց յետոյ կազմակեր մարդիկ ինձ հանդարտեցրին, ասելով թէ ով որ Ագամե- անին ճանաչուած է, նա երբեք չպիտի վի- բաւորի նորա տարօրինակ բայց անմեղ բը- նաւորութեանց: Եւ իրաւ վերջը այնքան զիջալ երեաց, որ համաձայնեցաւ իմ բո- լոր առաջարկած պայմաններին, միայն մի պայման առաջարկեց Ագամեանը իր կողմից, որի վրայ և պնդեց, հակառակ զէպըրմ բո- լորովին հրաժարուելով գնալ: Նա պահանջ- շում էր անպայման իր վարձը «ոսկով» հա- տուցանել, թէ ևս համաձայն էի նրան, որ թղթագրամը նոյն տարեքը սնի Ռուսաս- տանում, ինչ որ է ոսկին: Բայց Ագամեանը լսել անգամ չէր ուզում. ինչ պէտք էր անել. պէտք էր նորա այդ կապրիզին բաւականու- թիւն տալ: Եւ զրեցիցը պայմանի մէջ. «վարձը հատուցանել ոսկով»:

Սեպտեմբերին սկսեցաւ Նախիջևանի մէջ թատերասիրաց ընկերութեան Ագամեանի զեկալարութեամբ Հայերէն ներկայացուցիչներ և մէկը միւսին ետեւէն արուեցաւ «Համէթ», «Գիմակահանգու», «Ուրիշ Ալիստա», «Կոյրը», «Ոճրագործի ընտանիքը», «Սէր և Նախապաշարմունք». և ինչ: Ագամեանը հէց տալով անգամին գրաւեց հասարա- կութեան ուշադրութիւնը և տարուց յետոյ սնոր սիրելին: Նախիջևանի բեմի վրայ ու- նիցած յաշտութիւնները թատերասիրաց ընկերութեան վստահութիւն տուաւ անցի ել Ռուստովի բեմին վրայ: Առաջին անգա- ս ներկայացնելով Ռուս հասարակութեան ա- ոսալ Համէթի գերը՝ Ագամեան մէջ փոքոր (պերութիւն) և բարանցում հանեց հասա- րակութեան և թէ տեղական մամուլին մէջ, Ժամանակակից Դոնկոյուա Գեղջաւ շատ ոգեւորած տղեր նուրեց Ագամեանի Համ- լէպին: Ագամեանի Գորբաւոյի գերը կատա- րելու մասին նոյն թերթը կը գրէ. «Հասա- րակութիւնը նկատելի կըկարեկանացած էր նախորդ ներկայացուցիչների ժողովրդի մէջ եղած խօսակցութեան աղթի և բարուած ան- սարքերութիւնով սպասում էր զէպիտանաի յայտնելուն: Առաջին գործողութիւնը, ուր Գորբաւոն չէ մասնակցում, բաւական ձանձ- րանալի անցաւ, ոչ մի հետաքրքրութիւն չըպրծնելով հասարակութեան մէջ. բայց ահա երկրորդ գործողութիւնն է — յայտնեց Գորբա- սօ — Ագամեանը: Երափահարութիւններ թատրափը զինաւորեց նորան: Բայց այդ գործողութիւնը Ագամեանը տարաւ անթերի մեծ զգացմունքով և իր արդիւղիական խա- ղով գրաւեց բնահասարակութիւնը և համակարգը: Գորբաւոյի հոգեկան վիճակին վերին աստիճանի ձիջող արտայայտութիւն, մտածած և զիւրից խաղ, անօրինակ միմի- կայ մի խօսքով, ամէն բան, հէց առաջին անգամից ցոյց տուեց զէպիտանի մէջ մեծ տաղանդի ալը զերասանն»:

Նոր-Նախիջևանէն Ագամեանը, ինչպէս յայտնի է, գնաց մայրաքաղաքները, և այլ Ռուսաստանի նշանաւոր քաղաքները:

ՅԱԿՈՐ ԳԵՆՁԵԱՆ